

մատենաշարով լույս ընծայվեցին թուրքական, արաբական, ասորական, հունական և բյուզանդական բազմաթիվ սկզբնաղբյուրներ, որոնք էապես նպաստեցին հայագիտության, ինչպես նաև հայաստանյան արևելագիտության զարգացմանը: Այս աղբյուրները՝ գիտական ծանոթագրություններով օժտված հայերեն թարգմանությունները մեծապես հարստացրին հայագիտության սկզբնաղբյուրային շտեմարանը՝ խթանելով նոր հետազոտությունների իրականացումը: Ահա հենց այս ուսումնասիրությունները մեկտեղելու և նրանց շարունակականությունն ապահովելու նպատակով է, որ հիմնվեց «Արևելյան աղբյուրագիտություն» մատենաշարը:

Հիրավի առանցքային է եղել Ա. Տեր-Ղևոնդյանի ներդրումն «Արևելյան աղբյուրագիտություն» պարբերականի ստեղծման գործում: Բավական է նշել, որ նրա անժամանակ մահվան (1988 թ.) պատճառով 1-ին հատորի լույս-ընծայումից հետո պարբերականը դադարեց հրատարակվել: Մատենաշարի հիմնադրմանը նախորդել էր ԳԱ արևելագիտության ինստիտուտում նույն-անուն գիտահետազոտական խմբի, ապա՝ բաժնի ստեղծումը, որը 1983–1988 թթ. գլխավորել է Ա. Տեր-Ղևոնդյանը: Ինչպես «Արևելյան աղբյուրագիտություն» պարբերականը, գիտական բաժինը ևս ղեկավարի մահվանից կարճ ժամանակ անց դադարեց գործել՝ տարրալուծվելով ինստիտուտի մյուս ստորաբաժանումների մեջ:

Ա. Տեր-Ղևոնդյանն իր գիտական գործունեությունը ծավալել է ՀՀ ԳԱԱ պատմության և արևելագիտության ինստիտուտներում, որոնց նախորդ դարի գիտական ձեռքբերումների մեջ կարևոր տեղ են զբաղեցնում նրա մեծարժեք աշխատությունները: Ակադեմիական այս հաստատությունները մշտապես բարձր են գնահատել ականավոր գիտնականի վաստակը: Պատմության ինստիտուտի նախաձեռնությամբ 2013 թ. նշվեց Ա. Տեր-Ղևոնդյանի 85-ամյակը, որի առթիվ կազմակերպված երիտասարդական միջազգային գիտաժողովի նյութերն ամփոփվեցին 2014 թ. լույս տեսած «Հայաստանը և արաբական աշխարհը» ժողովածուում: Արևելագիտության ինստիտուտը, Մաշտոցյան Մատենադարանը և ԵՊՀ արաբագիտության ամբիոնը 2019 թ. համատեղ կազմակերպեցին Ա. Տեր-Ղևոնդյանի 90-ամյակին նվիրված միջազգային գիտաժողով, որի նյութերը, ինչպես վերը նշեցինք, ընդգրկվեցին գրախոսվող հատորում: Գիտաժողովի կազմակերպման և «Արևելյան աղբյուրագիտություն» պարբերականի 2-րդ հատորի հրատարակության գործում մեծ է նրա խմբագրակազմի անդամների, հատկապես՝ պ. գ. դ. Ազատ Բոգոյանի, պ. գ. դ. Քրիստինե Կոստիկյանի և պ. գ. թ. Գեորգի Միրզաբեկյանի ներդրումը, որոնց ջանադիր աշխատանքի շնորհիվ գիտաժողովն ունեցավ մասնակիցների լայն շրջանակ՝ ներառելով ինչպես հայաստանյան, այնպես էլ արտասահմանի նշանավոր հայագետների, իսկ ներկայացվող հատորն էլ օժտվեց մեծարժեք ուսումնասիրություններով:

Ա. Տեր-Ղևոնդյանի հիշատակին յուրահատուկ հարգանքի տուրք է ոչ միայն «Արևելյան աղբյուրագիտություն» մատենաշարի վերականգնումը, այլև Արևելագիտության ինստիտուտում նրա ղեկավարած բաժնի վերաբացումը (այն այժմ կոչվում է «Արևելյան աղբյուրագիտության և պատմագրություն»):

Խորհրդային տարիներին արևելյան աղբյուրների հայերեն թարգմանությունների և արևելագիտության ոլորտում արձանագրված ձեռքբերումների շնորհիվ գիտությունն այդ բնագավառը ոչ միայն հուսալիորեն ամրակայեց իր դիրքերը, այլև հետագա զարգացման լայն հնարավորություն ստացավ: Հատկապես վերջին տարիներին Մերձավոր Արևելքում ընթացող աշխարհաքաղաքական գործընթացներն ինչպես քաղաքական, այնպես էլ գիտական շրջանակներում առավել մեծացրել են հետաքրքրությունն արևելագիտության նկատմամբ: Ուրախալի է, որ Արևելքի նորագույն շրջանի պատմությունն առնչվող ուսումնասիրությունների կողքին, որոնք զգալի տեղ են զբաղեցնում հայաստանյան արդի արևելագիտության մեջ, նկատելիորեն աճել են գիտության այդ ոլորտի միջնադարյան շրջափուլին վերաբերող հետազոտությունները: Ուստի ինչպես «Արևելյան աղբյուրագիտություն» մատենաշարի հիմնադրման ժամանակ, այնպես էլ այսօր կա միջնադարյան արևելագիտության շարունակական զարգացման հուսալի նախադրյալներ ստեղծելու անհրաժեշտություն: Այս առումով, հիրավի, կարևոր ձեռքբերում է «Արևելյան աղբյուրագիտություն» պարբերականի վերականգնումը:

«Արևելյան աղբյուրագիտություն» 2-րդ հատորում ընդգրկված են թե՛ հայագիտական և թե՛ արևելագիտական (արաբագիտություն, իրանագիտություն, թուրքագիտություն, կովկասագիտություն և այլն) բնույթի հոդվածներ, որոնցում կան ինչպես աղբյուրագիտական, այնպես էլ գիտական այս կամ այն թեմային առնչվող ուսումնասիրություններ:

Հոդվածներից որոշներն առնչվում են Ա. Տեր-Ղևոնդյանի գործունեությանը և նրա գիտական հետաքրքրությունների շրջանակին, որը բավական ընդգրկուն է: Հայագիտության մեջ նրա ավանդը հանգամանորեն արժևորված է Փերար Դեղեյանի [“Aram Ter-Ghévondian (1928–1988): un héritage, une oeuvre, une transmission” (Ֆրանսերեն) – «Արամ Տեր-Ղևոնդյան (1928–1988). Ժառանգությունը, գործը, վաստակը, էջ 5–19 (հայերեն) հոդվածում: Նա Ա. Տեր-Ղևոնդյանի գիտական վաստակը գնահատելիս առանձնակի կարևորում է մի քանի հանգամանք՝ արևելյան ու եվրոպական մի շարք լեզուների փայլուն իմացությունը, հիմնավոր կրթությունը և, իհարկե, ժամանակի ականավոր հայագետներից Հրաչյա Աճառյանի ու Հովսեփ Օրբելու բարերար ազդեցությունը նրա գիտական ճանապարհի մեկնարկին: Հոդվածում բարձր է գնահատված Ա. Տեր-Ղևոնդյանի ներդրումն արաբական աղբյուրները հայերեն թարգմանելու և գիտական շրջանառության մեջ դնելու գործում: Առանձնակի կարևորվում են նրա ձեռքբերումները Հայաստանում արաբական տիրապետության ժամանակահատվածի, ինչպես նաև՝ Բագրատունյաց թագավորության և Արաբական խալիֆայության փոխհարաբերությունների պատմության ուսումնասիրման ուղղությամբ: Ծավալուն անդրադարձ է կատարված վաղմիջնադարյան Հայաստանի նախարարական համակարգի վերաբերյալ ականավոր գիտնականի հիմնարար ուսումնասիրություններին, որոնք մինչ օրս լայնորեն օգտագործվում են միջնադարագիտական հետազոտություններում:

Գրիգոր Լուսավորչի «Վարք»-ի արաբերեն նոր, ամբողջական բնագրի հայտնաբերմամբ ու այն հայերեն թարգմանությամբ գիտական շրջանառության մեջ դնելով Ա. Տեր-Ղևոնդյանն անգնահատելի ներդրում կատա-

րեց ազաթանգեղոսագիտության ոլորտում⁴ ինչը, ըստ պատշաճի, գնահատված է Ալեքսան Հակոբյանի «Հայոց Դարձի մանրամասներն ըստ Գրիգոր Լուսավորչի «Վարքի» արաբերէն տարբերակի» հոդվածում (էջ 34–52): Հատկապես կարևոր է նրա այն դիտարկումը, որ ազաթանգեղոսագիտության մեջ «Արամ Տէր-Ղևոնդյանի ուսումնասիրությունները նաեւ ցոյց տուեցին, որ Ազաթանգեղոսի երկի նոր խմբագրությունների ի յայտ գալուց յետոյ Հիմնաւոր ձեւով ապացուցւում է պատմահայր Մովսէս Խորենացու տեղեկությունների հաւաստիութիւնն այն դէպքերի մեծ մասում, երբ նա յղում է կատարում Ազաթանգեղոսին, սակայն Ազաթանգեղոսի «ազգային» տարբերակում տուեալ սիւժէները բացակայում են» («Հայոց Դարձի մանրամասներն ըստ Գրիգոր Լուսավորչի «Վարքի» արաբերէն տարբերակի», էջ 36):

Հիրավի վիթխարի է Ա. Տեր-Ղևոնդյանի ավանդը Հայ-արաբական հարաբերությունների, հատկապես՝ դրանց վաղմիջնադարյան շրջափուլի պատմության ուսումնասիրության ոլորտում⁵: Նրա գիտական ձեռքբերումները լավագույնս դիմացել են ժամանակի քննությանը և այսօր էլ ուղենշային են Հայագիտության այդ բնագավառում: Այդ շարքից է, օրինակ, նրա բացահայտումն առ այն, որ Հայերին Մուհամմադ մարգարեի տված արտոնագիրը հրովարտակը, որը Հայ մատենագրական ավանդույթում հայտնվել է Սամուել Անեցու «Ժամանակագրութեան» միջոցով, կազմել և հայերին է շնորհել ոչ թե իսլամի հիմնադիրը, այլ նրա անվանակից, Արմինիայի կառավարիչ Մուհամմադ իբն Մովանը VIII դարի սկզբին: Այսինքն՝ Սամուել Անեցին փոխարքային անունը չփոխել է Մուհամմադ մարգարեի անվան հետ: Ա. Տեր-Ղևոնդյանի այս կարևոր եզրակացությունը տեղ է գտել գրախոսվող ժողովածուի հոդվածագիրներից Գայանե Մկրտումյանի «Մատենադարանի արաբատառ ֆոնդի № 358 ձեռագիր-պայմանագիրը Հայ-մահմեդական հարաբերությունների համատեքստում» աշխատանքում (էջ 257–269), որտեղ հանգամանորեն քննվել են ինչպես հոդվածի խորագրում հիշվող ձեռագիրը, այնպես էլ նրա ընդօրինակություններն ու թարգմանությունները, որոնք ևս պահվում են Մաշտոցյան Մատենադարանի հավաքածուներում:

Քրիստինե Կոստիկյանի «Ֆազլի բեկ Իսֆահանիի Տարեգրության հաղորդումները Արևելյան Հայաստանի ժէ դարի պատմության որոշ հարցերի շուրջ» ծավալուն հոդվածում (էջ 305–333) հանգամանորեն քննության են առնված պարսկագիր հեղինակի տեղեկություններն Արևելյան Հայաստանի հատկապես Արցախի մեկիքությունների վերաբերյալ:

Այս շարքին կարելի է դասել նաև Գոհար Մխիթարյանի՝ «Շիրվանի էթնոքաղաքական վիճակը ներկայացնող հոդվածը» (էջ 364–388), որը շարադրված է Յ. Գերբերի պատմագրական երկերի հիման վրա:

Գազիկ Դանիելյանի հետաքրքրությունների ոլորտում են մամլուքյան շրջանի արաբական աղբյուրները, որոնք առատ նյութ են պարունակում

⁴ Ա. Տեր-Ղևոնդյան. Ազաթանգեղոսի արաբական նոր խմբագրությունը (արաբերեն բնագիր և ուսումնասիրություն), Երևան, 1968:

⁵ А. Тер-Гевондян. Армения и Арабский халифат. Ереван, 1977; նույնի՝ Հայաստանը VI–VIII դարերում, Երևան, 1996, նույնի՝ Հոդվածների ժողովածու, Երևան, 2002:

Հատկապես Կիլիկյան Հայաստանի և Միջերկրածովյան ավազանի մուսուլմանական երկրների հայ համայնքների պատմության վերաբերյալ: Այս հատկանիշը բնութագրական է նաև «Արևելյան աղբյուրագիտության» 2-րդ հատորում հրատարակած նրա հոդվածին [«Հայերը ԺԴ դարի մամլուքյան Կահիրեում. Խիզանաթ ալ-բունուդ (Hizānat al-bunūd) հայաբնակ թաղամասը», էջ 160–197], որտեղ մամլուքյան աղբյուրներից կատարված երբեմն ընդարձակ քաղվածքների հիման վրա և նրանց համադիր քննությամբ լուսաբանվել են Կահիրեի հայ համայնքին ու Կիլիկյան Հայաստանի պատմությանը վերաբերող բազմաթիվ հարցեր:

Կիլիկիայի հայկական պետության և նրա հարևան մուսուլմանական պետությունների պայմանագրային հարաբերությունների քննությանն է նվիրված նշանավոր հայագետ Կլոդ Մուլթաֆյանի [“Les traités de paix du Royaume d’Arménie cilicienne avec les seldjoukides et les mamelouks”, (Ֆրանսերեն) – Կիլիկյան Հայաստանի կնքած պայմանագրերը մուսուլմանական երկրների հետ, էջ 198–208 (հայերեն)] հոդվածը, որում ժամանակագրական հաջորդականությամբ ներկայացված են Իկոնիայի սելջուկյան և Եգիպտոսի մամլուքյան սուլթանությունների հետ Կիլիկյան Հայաստանի կնքած պայմանագրերը: Կ. Մուլթաֆյանի ինչպես այս, այնպես էլ մյուս աշխատություններն աչքի են ընկնում սկզբնաղբյուրային հարուստ հենքով, ինչն էապես մեծացնում է նրանց գիտական արժեքն ու կարևորությունը, ինչպես նաև Կիլիկյան Հայաստանի պատմությանը զբաղվող հետազոտողների համար բացահայտում բազմաթիվ սկզբնաղբյուրներ:

Մամլուքյան շրջանի մեկ այլ նշանավոր պատմիչ, ազգությամբ ղպտի Մուֆադդալ Աբի Ֆադաիլի [“A Coptic Historian and “the Caliph of the Armenians”: Cross-cultural Dynamics and Rhetorical Strategies in al-Mufaḍḍal Ibn abī l-Faḍā’il” (անգլերեն) – «Ղպտի պատմիչն ու «Հայոց Խալիֆան» միջմշակութային ներգործության և հոետորության միջոցները Մուֆադդալ Իբի Ալ-Ֆադաիլի երկում», էջ 209–256 (հայերեն)] երկի քննությանն է նվիրված խալաֆի արևելագետ Ջուզեպպե Չեչերեի ընդարձակ հոդվածը (էջ 209–256): Այն ոչ միայն արաբագիր այդ աղբյուրի՝ հայերին վերաբերող տեղիների քննությունն է, այլև մամլուքյան սուլթանության ոչ ղպտի քրիստոնյա ժողովուրդների նկատմամբ պատմիչի վերաբերմունքի բացահայտումն ու գնահատումը: Հոդվածագիրը եզրակացրել է, որ այդ ժողովուրդներին կոչելով էթնիկ ու քաղաքական եզրույթներով ղպտի պատմիչը ձգտել է մամլուքյան իշխանությունների աչքում թշնամի համարվող այլ քրիստոնյաներին տարբերակել-առաձևացնել իր ազգակիցներից:

Հայաստանին վերաբերող և սույն հատորում քննության առնված օտար աղբյուրների շարքից է XV դ. թեմուրյան շրջանի պատմագիր Հաֆեզ-ե Աբրուի «Աշխարհագրություն»-ը, որը ներկայացված է Էլինա Ղազարյանի («Հաֆեզ-ե Աբրուի «Աշխարհագրության» Հայաստանին վերաբերող հաղորդումները», էջ 270–288) հոդվածում: Չնայած իր քաղվածք բնույթին՝ այս աղբյուրը պատմաաշխարհագրական բնույթի կարևոր տեղեկություններ է հաղորդում ինչպես Կիլիկյան, այնպես էլ բուն Հայաստանի վերաբերյալ: Հաֆեզ-ե Աբրուի տվյալներից որոշները բացակայում են «Աշխարհագրության» համար աղբյուր ծառայած երկերից, ինչն էլ ավելի է բարձ-

րացնում նրա արժեքը: XV դարի Հայ պատմագրական երկերի սակավութ-
յունը պարտադրում է մեծապես կարևորել Հայոց պատմության այդ դա-
րաշրջանի վերաբերյալ սկզբնաղբյուրային յուրաքանչյուր տեղեկություն:

Նույնպես երկարատև դադարից հետո կրկին ակտիվություն է նկատվում
Հայաստանի և Հայերի մասին վկայող օսմանյան աղբյուրների ուսումնասիր-
ման ոլորտում, որտեղ կատարվող աշխատանքները, հուսով ենք, կհանգեցնեն
այդ մատենաշարի՝ «Թուրքական աղբյուրներ» շարքի վերականգնմանը: Այս
աղբյուրների մեջ խիստ հետաքրքրական են օսմանյան հարկացուցակները,
որոնք առատ նյութ են պարունակում ոչ միայն ժամանակի սոցիալ-տնտեսա-
կան պատմության, այլև գիտաքաղաքական կարևորություն ունեցող այնպի-
սի մի թեմատիկայի վերաբերյալ, ինչպիսին ժողովրդագրությունն է: Հարկա-
մատյանների հետազոտման ու թարգմանության ուղղությամբ նշանակալի
աշխատանք է կատարում Գեորգի Միրզաբեկյանը, և սույն պարբերականում
ընդգրկված նրա հոդվածը՝ «Կարբի քաղաքի 1728 թ. օսմանյան հարկացու-
ցակը որպես Հայաստանի պատմության սկզբնաղբյուր» (էջ 334–363) հենց
այդ թեմատիկայով:

Ոչ պակաս կարևորություն ունեն նաև օտարագիր այն սկզբնաղբյուր-
ները, որոնք վերաբերում են ոչ միայն Հայ, այլ նաև Արևելքի մյուս ժողո-
վուրդների պատմությանը (քաղաքական, մշակութային, սոցիալ-տնտեսա-
կան և այլն): Այս առումով հետաքրքրական է Շուշան Կյուրեղյանի «Իբն
ալ-Ջաուզիի «Թալբիս Իբլիս» աշխատության կառուցվածքը» հոդվածը (էջ
145–159), որում հեղինակը հակիրճ ներկայացրել է «Թալբիս Իբլիս» («Սա-
տանայի խարդավանքները») աշխատության բովանդակությունը՝ հնարավոր-
ություն տալով ընթերցողին ընդհանուր պատկերացում կազմել այդ երկի
վերաբերյալ: Հասցեագրված լինելով հասարակական ամենատարբեր խավե-
րին՝ «Թալբիս Իբլիս»-ը հնարավորություն է տալիս բացահայտելու մուսուլ-
մանական հանրության գունապնակը՝ հասարակության ստորին շերտից
մինչև ամենաբարձր աստիճանին գտնվողներ, գիտության, կրոնական այս
կամ այն ուղղության ներկայացուցիչներ այլ նաև հետաքրքրական է մու-
սուլմանական հանրություն մեղսագործության դեմ պայքարի միջոցների ու
մեթոդների բացահայտման տեսանկյունից:

Արևելքի, հատկապես՝ Հայաստանի հարևան երկրների պատմության
ուսումնասիրությունը ևս հայաստանյան արևելագիտության կարևոր խն-
դիրներից է: Այդպիսի հետազոտությունների արդյունավետությունը պայ-
մանավորված է ոչ միայն ուսումնասիրողի լեզվական կարողություններով,
այլ նաև այդ երկրներում իրենց իսկ պատմության ընկալման և այն հե-
տազոտելու գաղափարական սկզբունքների իմացությամբ: Այս տեսանկյու-
նից կարևոր և օգտակար նշանակություն ունի Անուշ Հովհաննիսյանի
(«Օսմանիզմ թե՞ թյուրքիզմ. հայեցակարգերի պայքարը “Tarih-i os-
manî encümeni mecmuası” պարբերականի էջերում», էջ 422–433) հոդ-
վածը, որտեղ համակողմանի քննության է առնված Օսմանյան կայսրութ-
յունում, ապա հանրապետական Թուրքիայում օսմանիզմի և թյուրքիզմի
գաղափարական պայքարն այդ երկրի պատմության ուսումնասիրման հա-
մատեքստում:

Հայաստանի և Հայերի մասին վկայող օտար աղբյուրների կողքին մեծապես կարևոր է նաև Հայ մատենագրական երկերի օտարալեզու թարգմանությունները: Այս ոլորտի նշանակալի ձեռքբերումներից է Կորյունի «Վարք Մաշտոցի» երկի՝ անվանի Հայագետ Աբրահամ Տերյանի կատարած անգլերեն թարգմանությունը՝ օժտված արժեքավոր ուսումնասիրությամբ և ծանոթագրություններով (Հանձնված է տպագրության): Գրախոսվող պարբերականում ընդգրկված նրա հոդվածը [“Literary and Oratorical Formulae in Koriwn’s Life of Mashtots” (անգլերեն) – «Գրական և հռետորական բանաձևեր Կորյունի «Վարք Մաշտոցի» մէջ», էջ 53–63 (Հայերեն)], որը վերաբերում է «Վարքի» լեզվաոճական առանձնահատկություններին, հենց այդ թարգմանության արգասիքներից է՝ գրված «Թարգմանչի և ծանոթագրողի» կողմից, ինչպես նշում է հոդվածագիրը: Ուշագրավ է հոդվածագրի կարծիքն առ այն, որ «Վարքը» ոչ թե պատմագրական, այլ ջատագովական ժանրի ստեղծագործություն է: Այս տեսակետը հիմնավորող կովանների շարքում խիստ հետաքրքրական է երկում «գովել» բայի կիրառությունը վերաբերող նրա բացահայտումը, ըստ որի՝ այդ բառը, զարմանալիորեն, հանդիպում է միայն «Վարքի» նախագրությունում, այն էլ՝ յոթ անգամ:

Գիտական պարբերականների բովանդակությունը շահեկանորեն հարստացնում են նաև այնպիսի հոդվածներ, որոնք վերաբերում են գիտության այս կամ այն բնագավառում կատարվող աշխատանքներին, նախանշում հետագա անելիքները, ինչպես նաև սահմանում գիտական թեմատիկ ուղղություններ: Այս շարքից է անվանի Հայագետ Մայքլ Սթոունի հոդվածը (էջ 20–33), որը գրեթե ավարտական փուլում գտնվող բացառիկ կարևորություն ունեցող մի գիտական նախագծի, այն է՝ Երուսաղեմի և Սինայի թերակղզու Հայերեն գրությունների, այդ թվում՝ վիմագրերի ամբողջական հավաքածուի ստեղծման մասին է: Հոդվածագիրը մանրամասն ներկայացրել է ժողովածուի կազմման մեթոդներն ու սկզբունքները: Ուրախալի է, որ այն առանց բացառության ներառելու է Սուրբ երկրի Հայերեն բոլոր գրությունները՝ վիմագրերից մինչև խճանկարային արձանագրություններ (ժողովածուի ստեղծմանը մասնակցում են Բեն Գուրիոն Համալսարանի գիտաշխատող, հնագետ Յանա Չեխանովեցը և Մաշտոցյան Մատենադարանի ավագ գիտաշխատող, բանասեր Խաչիկ Հարությունյանը):

Թերևս սխալ չի լինի այս շարքում ներառել նաև Իվեթ Թաջարյանի և Անի Ավետիսյանի «Արևելյան ձեռագրագիտության կեղծարարության արվեստն ըստ Մատենադարանի Հ^ր 137 ձեռագիր-օրինակի» հոդվածը (էջ 289–304), քանզի այն ոչ միայն բացահայտում է քննության առարկա ձեռագրի կեղծման հանգամանքները, այլև հիմնավորում այդպիսի ձեռագրերի ուսումնասիրման անհրաժեշտությունը, այլ խոսքով՝ սահմանում գիտական նոր թեմատիկա, որը, հեղինակների պնդմամբ, մեզանում անտեսված է, մինչդեռ «աշխարհում այն արդիական է և որոշ ձեռագրագետների համար՝ նեղ մասնագիտական» (էջ 290): Թեկուզ միայն այն հանգամանքը, որ այդ երևույթը գոյություն ունի նաև մեր օրերում, արդեն իսկ հիմնավոր է դարձնում այդպիսի ձեռագրական նմուշների ուսումնասիրման անհրաժեշտությունը:

Արևելագիտական ու աղբյուրագիտական հոդվածների կողքին ժողովածուում տեղ են գտել նաև Հայոց եկեղեցու և Կիլիկիայի հայկական թագավորության պատմությունը վերաբերող արժեքավոր ուսումնասիրություններ: Այդ շարքից են Ազատ Բոգոյանի [«Հայոց եկեղեցին տիեզերական եկեղեցու նվիրապետական համակարգում (Ե դարի սկիզբ)», էջ 64–100], Իգոր Դորֆման-Լազարևի [«Ադամը, (Նոյը) և թագաւորութեան գաղափարը Աղթամարի եկեղեցու պատկերային ծրագրում», էջ 111–127], Գևորգ Ղազարյանի [«Անտիոքի պատրիարքության հայկական թեմերը (Ե–ԻԱ դդ.)», էջ 389–421], Լիանա Աղաբեկյանի («Կիլիկյան Հայաստանը ԺԲ դ. վերջին քառորդի Մերձավոր Արևելքի ռազմաքաղաքական գործընթացներում», էջ 128–144) հոդվածները, որոնցում հանգամանորեն քննության են առնված Հայոց եկեղեցու նվիրապետության ձևավորմանը, Աղթամարի Սբ. Խաչ եկեղեցու բարձրաքանդակներում թագավորական իշխանության գաղափարի պատկերմանը, Մերձավոր Արևելքի XII դարավերջի քաղաքական խճանկարում Կիլիկյան Հայաստանի զբաղեցրած դիրքին և Անտիոքի պատրիարքության հայկական թեմերին վերաբերող բազմաթիվ հարցեր:

Պարբերական մամուլը ոչ միայն գիտական նոր արդյունքի տարածման արդյունավետ միջոց է, այլև գիտական բանավեճի և կեղծարարության դեմ պայքարի կարևոր հարթակ, ուստի ամենևին պատահական չէ, որ այդպիսի հոդվածներն ավանդաբար առաձին տեղ են զբաղեցնում ամսագրային կամ տարեգրական բնույթի հրատարակություններում: Այս առումով հիշատակելի է Արսեն Շահինյանի [«Очередная попытка фальсификации ранне-средневековой географии Кавказской Албании (Алуанка-Аррана)» (ռուսերեն) – «Կովկասյան Ալբանիայի (Աղվանքի-Առանի) վաղմիջնադարյան աշխարհագրության կեղծման հերթական փորձը» (հայերեն), էջ 101–110] հոդվածը, որն Աղվանքի վաղմիջնադարյան շրջանի աշխարհագրության վերաբերյալ աղբյուրական պատմագիտության մի քանի խեղաթյուրումների հիմնավոր պատասխանն է:

Մեծապես կարևորելով «Արևելյան աղբյուրագիտություն» պարբերականի վերականգնումը և բարձր գանահատելով նրա 2-րդ հատորի գիտական արժեքը՝ հարկ ենք համարում ներկայացնել մի քանի նկատառում-ցանկություն, որոնք, կարծում ենք, կարող են օգտակար լինել մատենաչարի հետագա հրատարակությունների համար:

Կարծում ենք՝ հատորն առավել կշահեր, եթե օժտված լիներ մատենաչարի ստեղծման պատմությունն ու նրա անդրանիկ համարը ներկայացնող, պարբերականի վերականգնման նպատակները սահմանող, «Արևելյան աղբյուրագիտություն» առաջիկա անելիքները նախանշող և այդ բնագավառի խնդիրները բացահատող առաջաբանով:

Խնդրո առարկա հատորի հոդվածները, ի տարբերություն առաջինի, դասակարգված են ժամանակագրական հաջորդականությամբ, ինչն այնքան էլ չի համապատասխանում այսպիսի հրատարակությունների բնույթին: Կարծում ենք՝ պարբերականի հետագա հրատարակությունների համար առավել պատշաճ կարող են լինել թեմատիկ՝ ըստ արևելագիտության բնագավառների (արաբագիտություն, իրանագիտություն, թուրքագիտություն, կովկասա-

գիտություն և այլն) կամ պարբերականներին բնորոշ ավանդական բաժանումներն ըստ աշխատանքների բնույթի՝ հոգվածներ, հրապարակումներ, հաղորդումներ, գրախոսություններ և այլն:

Հայերեն հոգվածների մի մասն ունի ուղևորներն ամփոփում, մյուս մասը՝ անգլերեն: Կարծում ենք՝ աշխատանքները պետք է ունենան երկեզու ամփոփումներ: Ի դեպ, վերջիններիս ծավալը շատ դեպքերում խիստ փոքր է, ինչը հնարավորություն չի տալիս բավարար պատկերացում կազմել հոգվածի բովանդակության վերաբերյալ:

Վերստին կարևորելով «Արևելյան աղբյուրագիտություն» պարբերականի վերականգնումը՝ մաղթում ենք շարունակական ընթացք և արժեքավոր ուսումնասիրություններ պարունակող նորանոր հատորներ:

ՎԱՀԵ ԹՈՐՈՍՅԱՆ

Պ. Գ. Թ., Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի գիտական քարտուղար, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի միջին դարերի բաժնի ալագ գիտաշխատող, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գեորգյան հոգևոր ճեմարանի դասախոս: Գիտական հետաքրքրությունը՝ Հայոց եկեղեցու պատմություն (միջնադարյան շրջափուլ): Հեղինակ է 1 մենագրության և 10 հոգվածի: vahetorosyan7@gmail.com